

անիրաւ տեղը քու աչքէդ հանել» : Առ  
խօսքերս կարծես թէ ամիրապետին  
գումար շարժեցին, որ որչափ կրօստ  
մարդ էր, բայց ուրիշ կողմանէ ալ վեհ-  
անձն էր ու մեծասիրտ, որով չէր կըր-  
նար անտարբեր ըլլալ, և չզարմանաւ  
իմ բարեկամիս այսպիսի կարգէ գումա-  
րը ած բարերարութեանցը վրայ : « Քու  
սիրոյդ համար թողութիւն կու տամ և  
կարձեկեմ զինքը, պատասխանեց ինծի  
Մամոն : Գնաւ արձեկէ զինքը շղթանե-  
րէն, բայց ըսէ իրեն որ ինծի գայ » :  
Աս ըսելէն վերջը նորէն ուղը ինկայ, և  
իրեն ամենայն յարգութիւններս ընե-  
լէն ետքը՝ մեծապէս չնորհակալ ե-  
ղայ՝ և տուն դառնալով, երիտասարդը  
հետո ամիրապետին դիմացը բերի, ո-  
րուն մեկէն պատուաւոր զգեստներ  
հազցընելով, տասը ձի, տասը ջորի և  
տասը ուղտ պարզն տուաւ իրեն : ա-  
սոնց վրայ նաև քսակ մը լցուն տասը  
հազար ոսկիով տուաւ ձեռքը ճամբու-  
ծակիքի համար, ու նաև յանձնարարա-  
կան թուղթ մը տուաւ որ տանի Դա-  
մասկոսի քաղաքապետին :

ալ անյայտ կը մնայ, և միայն ձեռուազրին հնովթենէն կամ ուրիշ պարագաներէ կրնանք գուշակել հեղինակին ատենն ալ: — Անուան և ատենուան պակասութիւնը այնչափ ցաւալի չէ մեզի, որչափ ուրախալի է երգածներուն մնալը. և ըստ այսմ յետ այնքան կորստեան և թաքստեան գրոց մերոց, դեռ ոչ քիչ երգը և երգաբանք կը մնան, և օրէ օր ալ կը յայտնուին. որով մեր վերջին կամ նոր դարուց գրականութիւնն ալ կ'աճի կամ կը հարստանայ: Վերջին դարը ըսելով՝ կ'իմանամ մեր ընտիր լեզուով և ոճով գրող հեղինակաց ժամանակէն ետքը, որ կը հասնի մինչև ՚ի կէս ԺՊ դարու կամ անոր վերջը. կամ շատ շատ ցկէս ԺՊ դարու, յորում դեռ քանի մը և յետին մաքուր գրաբառ գրովք կ'երևին. անկէ ետև կամ դասական լեզուի անհմտութիւն, կամ ուամբ կական դարձուածք ոճի և բառից՝ Նոր գրականութիւն մը կ'ընծայեն: Այս նոր և վերջին դարուց գրականութիւնն որչափ ալ աղքատ և ցած է և նախնեաց շնորհքէն զորկ, միայն ազգային կամ ուամկախառն երգերով ու տաղերովը՝ առաւելութիւն մ'ունի. յիրաւի աստնց մէջ ալ չկայ մեր ոսկեղէն և արծաթի ըսուած դարուց քերգուածոց շնորհքը և վսեմ լեզուն, սակայն ունին ասոնք (ետքիններս) ալ իրենց յատուկ իսկատիպ շնորհք մը. և երբեմն ուամկական կամ աշխարհաբառ երգեր աւելի ախորժարու և աւելի ողորկ կու զան լսելեաց. վասն զի աւելի բնական և հասարակաց լեզուով արտադրած և երգած են՝ քան արուեստով կուած և կոկած այն բարձր և ծանր լեզուն, որուն բաւական գիտութիւն չունէին այդ վերջին գրովքն: Դարձեալ այնպիսի նիւթերու վրայագր գրուածք կան այս մեր ուամկի ըսուած լեզուաւ, որ հին լեզուին մէջ չգտուելով՝ չեմք գիտեր թէ անով բնչպէս կը բացատրուէր ՚ի նախնեաց, վերջապէս թէ և երբեմն հայկական լեզուին զուութիւնն ալ պահած չեն նոր վիպասանք, այլ և օտար (թուրք, արաբ և պարսիկ) լեզուաց բառերով

## Ազգային բանաստեղծք

## ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵԶՆԿԱՑԻ

Աղքային երգոց և երգչաց վրայ շատ  
և շատ անգամ խօսուած է թէ մեր և  
թէ ուրիշ աղքային օրագրաց մէջ. բայց  
այն մեր աղքային կամ ուսմկական ը-  
սուուած երգաբանից ոչ թիւը գիտեմք,  
ոչ անունները և ոչ ժամանակը: Թիւը  
չեմք գիտեր, վասն զի շատ հեղ նոր ձե-  
ռագիր տաղարանի կամ ուրիշ գրոց  
մէջ գեռ անծանօթ երգիչներու կը հան  
դիպինք, և մեր լեզուին նոր (մեծ կամ  
պղստիկ) դրող մ'ալ 'ի լցու կու գայ: Ա-  
նուններն ալ չեմք գիտեր շատին. վասն  
զի շատ հեղ առանց հեղինակի անուան  
զրուած են երգերն. որով ժամանակն

իսառնած են երգերնին, 'ի վերայ այս ամեն բանի՝ զեռ շատ հեղ խակական չնորդիք և վայելցութիւն մ'ունին : — Եր գերնուն նիւթերն ընդհանրապէս բարյական խրատներ են . կամ մահուան և ննչեցերոց վրայ ողբեր, կամ սիրոյ և դովասանքի երգեր, կամ վարդի և պըլ-պուլի գիմառնութիւններ, կամ հարսանեաց նուազներ, կամ դարիսկի երգեր . քիչ հեղ օտար նիւթոց վրայ կը դանենք, ինչպէս ծիծաղական բաներու, կամ երգիծանք, կամ կերպ կերպ դիպուածոց :

Այս ռամկական լեզուով ոտանաւոր գրողաց առաջին և հնագոյն կը գտնենք զայն՝ որ մեր միջին կամ արծաթիդարուն հեղինակաց և դրչաց ալ պարագլուին է . մեր աննման Ս. Ներսէս Շնորհալին՝ 'ի կէս ձի գարու, որոյ ռամկախօս հանելուկներն ամենուն յայտնի են : Իրեն ժամանակակից Ս. Ներսէս լամբրոնացին և Միսիթար Հերացին՝ նոյն լեզուն բանեցուցեր են արձակ գրուածոց մէջ, որ թերեւս իրենցմէ առաջ ալ գրուած գտուի . իրկ ոտանաւոր՝ չեփ գտներ նախ քան զշնորհալին, և ոչ յիշեմք անմիջապէս իրմէ ետքըն, այլ դար մ'և աւելի ետքն . ինչպէս Յուլիանու Երզնկացւոյն քանի մը խրատական քերգուածքն՝ 'ի վերջ մի կամ 'ի ոկիզն մի դի դարու, յորում և խաչատուր կեշառացւոյն քերգուածքն :

Ասոնց գրեթէ ժամանակակից է և կոստանդին Երզնկացին, որ միայն իր երգերովն ծանօթ է մեղի, կամ թէ լաւ և լսել մեր ձեռքը հասած մէկ ձեռագրով մը, որ գրուած է յամին 1836, « ի թալիրէժ, 'ի Դառվազայի մնջայռան » . ձեռամբ Ամիր Փօլին, որ է որդի Քալայմաչի Յուսիփայ, և թոռն Միթոռի . ժամանակակից և բարեկամ հեղինակին, որ և ասոր (Ամիրի) համար գրեր է իր քերգուածները, և ինչպէս կ'երևի հետզհետէ կը խաւրէ եղեր անոր . ան ալ յետոյ բոլորը մէկ տեղ ժողվեր դրեր է : Ոտանաւորներնէն առաջ՝ գրոց սկիզբը քանի մը թերթ գրաբառ քան կայ « Յաղագս միաբանութեան

» եղբարջ, բանք սակաւ և պիտանիք, » վկայութեամբ գրոց սրբոց . զոր ժող » դովեալ գրեցի սիրով եղբայրութեան, » այնոցիկ՝ որք ցանկան փափագանօք » բանից իմաստութեան » . թուի թէ այս այլ կոստանդինէն շարադրուած է : — Իսկ երգերն կամ ոտանաւորներն, որ գրեթէ բոլոր բարյական և այլաբանական են, հանդերձ նկարագրութեամբք գարնան, եւ, շատը նախնեաց ոճոյն մօտ են շէնքովլ այսինքն երկար տողերով, 14, 15, 16 վանկով, ամենն ալ յանգով . ամեն մէկ երգ մէկ յանգով, այսինքն առողերուն վերջը նոյն ձայնով կը լըննայ, և շատին վերջի տան մէջ իր անունը կը յիշէ կոստանդին :

Թուով 22 են այս ոտանաւորքս . որոց առաջինն անվերնագիր՝ իբր 200 տող 16 ոտեան, աշխարհիս ստեղծմանէն ինչուան չոգուոյն սրբոյ Գալատեան պատմութիւնն է Ս. Գրոց՝ համառօտեալ, իբրև Գր. Մագիստրոսի հազար տողեան գրուածը : — Բ. անվերնագիր՝ իմաստութեան գովութիւնն է : — Գ. Գար նան այլաբանութիւն Քրիստոսի գալրատեան նմանցըներով : — Դ. « Բանք յա . » զագս չար ընկերաց և պատրաստ կալ » միլորեցուցիչ ոմանց » : — Ե. « Բանք » յերկու գէմն, մոտաց տեսութիւն՝ 'ի » հոգի և 'ի մարմին . զոր առակաք խօսի » այսպէս : — Զ. « Բանք յաղագս արեցական արդարութեան . . . զոր առակաք խօսի » : — Է. Յաղագս ան » գիտաց սուստ խօսելց զբանս անպիտ » տանս և հակառակ կալ իմաստնոց » . այրած սրտով զանգատ մ'է ընդդէմ տգիտաց, և գովեստ գիտնոց, այս ետքիններուս կարգէն զինքը սեպելով . նոյն սրտով գրած է . Ը. Երգն ալ, ընդդէմ իրեն նախսանձողաց, ինքզինքն արդարացընելով : — Թ. որոյ սկիզբն պակսի, ընդդէմ լեզուագարաց է : — Ժ. է իբրև արգահատանք մը առջի յանդիմանութեանց վրայ : — ԺԱ. « Բանքս վարդին օրինակաւ գրիստոս պատմէ » . — ԺԲ. « Մեկնութիւն վարդին համառօտ » . այսինքն առաջին (ԺԱ.) երգոյն : — ԺԴ.

«Բանք յաղագս անբաւելի պրանչելեացն  
Աստուծոյ» . այս երգը ութուունեայ կամ  
Ճավանկ է , պէսպէս յանգերով : — ԺԴ .  
«Բանք յաղագս անցաւոր մեծութեան» .  
աս ալ 10վանկ է և Շահնեամեի եղա-  
նակին վրայ շիներ է՝ ուրիշներուն խընդ-  
ռելով : — ԺԵ . «Բան գարնան օրինա-  
կաւ , Խորհուրդ ՚ի Քրիստոս » . այս եր-  
գոյս մէկ մասն հրատարակած եմք այս  
օրագրիս մէջ (Ի . Հատոր , Երես 98) : —  
ԺԶ . Նոյն բան խորհրդով , և ՚ի յայլ  
զէմն տեսութիւն : — ԺԷ . Խրատ հասա-  
րակաց պիտանի : — ԺԸ . Բան յաղագս  
լեզով և չդատել զընկերն : — ԺԹ .  
«Բանք խօսիլ ՚ի ժամ տրտմութեան» .  
Դարձեալ ուրիշներէն սիրած վիրաւո-  
րած ըլլարով՝ գրեր է զայս : — Ի . Բանք  
յաղագս չար կնոջ : — ԻԱ . Բան ՚ի կոս-  
տրնդեայ առ մեր հոգեսոր եղայրն Ա-  
միր , հոգով ՚ի հոգի և սրտէ ՚ի սիրտ :  
— ԻԲ . Յաղագս եղայրով մթեան բարոյ  
և չարի » :

Թէպէտ և այս վերնագիրերս աւելի  
զուտ գրաբառ են , բայց երգերն այն-  
պէս չեն , նաև թուրք ու պարսիկ բա-  
ռեր ալ կան մէջը խառնած : Շէնքն կամ  
ոճն ընդհանրապէս դուրիկ կամ կակուլ

Է . Իմաստներն յստակ և ընտիր . իսկ գրե-  
լուն գլխաւոր նապատակն է մէկ մը իր  
բարեկամին՝ Ամիր Փօլին և ուրիշներու-  
խրատ տալ , մէկ մ'ալ իրեն նախան-  
ձուները կամ տգէտ ու լեզուագար  
մարդիկը յանդիմանել : Եւ ինչպէս Կ'ե-  
րսի բնատուր հանճար մ'ունի եղեր վի-  
պասանութեան կամ ոտանաւոր շինե-  
լու , և երբեմն յանպատրաստից ալ .  
ինչպէս կըսէ ժթի երգոյն համար . «զոր  
գրեցի առ պահն , վան սուստ եղարց՝  
զոր վիրաւորեցայ » . այս սուստ եղարց  
տուած վէրգերն ալ՝ երբեմն նոյն իսկ ի-  
րեն ասանկ յաջող քերթողութեանը  
համար են եղեր , ինչպէս որ կ'իմացընէ  
լ երգով , որուն մէջ իր ճարտարու-  
թեան և յաջողութեան գաղտնիքն ալ  
մեզի կ'իմացընէ , միանդամայն գրուա-  
ծին հետ՝ իրեն ալ բաւական իսկատիպ  
մարդ մ'ըլլալը . զոր և (ինչպէս առաջ  
ըսի ) ուրիշ տեղէ չեմք գիտեր , բայց  
եթէ սոյն այս իր երգերէն : ԱՀաւասիկ  
այդ վերջի յիշած տեղեկարար երգը ,  
հանդերձ նոյնպիսի վերնագրովը . որուն  
դժբաղդաբար վերջը պակաս է , թուղթ  
մ'ընկած ըլլալով ձեռագրէն :

Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու , թէ ո՞րպէս խօսի սա այսպիսի  
բան , զի վարդապետի չէ աշակերտուել . զի այլ է աշխատիկն և այլ է շնորհքն  
՚ի Հոգուոյն . զոր եւ պատմեմ ձեզ , յաղագս տեսլեան իմոյ , զոր տեսի գար-  
մանայի տեսիլ , մինչ ՚ի վանք կայի հնգետուասան ամաց . զոր տեսի այր  
մի արեգակնազգեստ և լի լուսով :

Ոմանք չար են հետ ինձ , ու նախանձով են յիմ վերայ ,  
վասն իմ գրեալ բանիս՝ որ առ մարդիկ երեւենայ .

Ասեն , թէ ո՞նց՝ զրէ բան քաղցրահամ ու մեզ կարգայ .

Որ ի մեր միջիս ընկեր կամ համեմատ իւր չրկայ :

Կոյր են հոգւով աշզք մըտօք , յիմար են անյիմայ .

Թէ աւել ով է խելաց՝ կամ այս չնորհիս որ առ իս կայ .

Ես եմ աման հողէ , և ի յիս լցած կայ խաղինայ <sup>2</sup> .

Չոր ես խօսիմ հոգւով՝ այն մեծ տիրոջն է մանանայ :

Ով գող է այս գանձիս , ու կամ նենգով ինձ լինայ ,

Աստուծոյ է հակառակ ու ինք դատաստանարան է նորայ .

Ով որ ինձ միտ դընէ ու զինչ խօսիմ ինք հասկանայ ,  
Նայ ես իր տամ նըշան՝ թէ այս չնորհիս որպէս հասայ :

Ես երբ հնգետասան ամաց էի մանուկ տըղայ ,  
Ի վանք յուսումն էի , եւ գիշեր մի տեսիլ տեսայ .

Մանուկ մի լուսեղէն յաթոռ նստել որպէս աղքայ ,  
Նըման արեգական է գեղեցիկ որ լցոս կու տայ ,

Այնպէս ես յիր փառացն եւ ի լուսոյն զարհուրեցայ ,  
Որ չկարցի հարցանել , թէ , Տէր , ով ես , զանունդ ասա .  
Երկիր պազի իրենն ի յայն պահուն ոնց զինք տեսայ ,  
Ու իրեք իննդրուածով հողոյն հասար խոնարհեցայ :

Ասցի . գունահքար <sup>1</sup> , դու թագաւոր , քեզիկ մեղայ .  
Ասցի . հոգով հիւանդ եմ , զքեղ բժիշկ ինձիկ դըտայ .  
Ասցի . ես եմ աղքատ , և յերակ բանի կարօտ կեցայ :  
Շնորհէ դու այս գերոյս մասն ու բաժին ինձ եւ դիլայ <sup>2</sup> :

Նայ իր սիրտն ողորմած՝ անարժանիս շոյտ քաղցրանայ .  
Ենէ ի յաթոռոյն եւ դընէ զոտն ի յիմ վերայ .

Կոխէ զիս եւ քայլէ , և այլ վայր ի յիր տեղըն դընայ :  
Երբ իմ խնդիրքն եղաւ՝ ես մուրատով ի յոտն ելայ :

Ասցի . Թող քո տեսդ ինձ աղքայովթիւն հերկ լինայ ,  
Թէ գթաս յանպէտ ծառայ և յերակ քո տեսդ ինձ երեւնայ .  
Նայ ես զայս կեանքս ունայն ուրանամ երբ որ զքեղ տեսայ .  
Երբ զիս ընդունեցար եւ կոչեցիր քեզիկ ծառայ :

Նայ ինձ պատասխանեց քաղցր ձայնով ասաց , Գընա :  
Նայ իր բարբառն ահեղ զարհուրեցոյց զիս որ զարթայ :  
Ենեմ կապեմ գօտի ու մէն յաղօթք ես կանգնեցայ .  
Խնդրի <sup>3</sup> յայն սուրբ տեսոյն՝ որ հետ մի այլ առ իս նա գայ :

Անցաւ աւուրք բազում , մես աղջմօք ի լաց կեցայ ,  
Զի իր պայծառ տեսոյն ես հետ մի այլ փափագեցայ .

Չոնի ցորեկ հանգիստ ու ոչ գիշեր ի քուն մըտայ .

Եղայ զերդ ըզիմար , և իսկի մարդու ի խոստ <sup>4</sup> չեկայ :

Ես ոչ ի միտք բերի՝ թէ այս տեսիլս ինչ եղք լինայ ,  
Եւ ոչ զնա քննեցի՝ զի հասակովս ի <sup>5</sup> ես տղայ .

Երբ այլ բազում աւուրք ես ի յուսումըն վարժեցայ՝

Ապա զմտաւ ածի ու զայն խորհուրդըն հասկացայ :

Եղեւ յանկարծակի ինձ բան խօսել՝ ով ուզենայ .

Այնպէս որ ես ի յիմ խօսից շարելըն զարմացայ .

Սերով ու մեծ յուսով ես այս բանիս ի փորձ մըտայ .

Զհոգիս փոխան տըւի , և ապա ես այն հոգոյն հասայ :

<sup>1</sup> Կիւանեհեար . մեղաւոր :

<sup>2</sup> Խիւայ . պատուոյ զգեստ :

<sup>3</sup> Խնդրեցի որ անքամ մ'ալ ինձի երենայ :

<sup>4</sup> Մարդու ջնոստովանեցայ , չիմացուցի :

<sup>5</sup> Են :

իմ բանս ի յայն լուսոյն եկել առ իս ինձ մանանայ ,  
Որ իմ աշքս ես զինք բարձր ի յաթոռ նստած տեսայ .  
Երբ որ զայս մեծ պարզեւքս ի յայն ես լուսոյն ընկալայ ,  
Նա զիմ մարմինս հոգովս իր սուրբ տեսոյն գրեմ ծառայ :  
Այսօր հոգովս ուրախ եմ եւ ի մեծ մուրատ հասայ ,  
Որ ես առանց շրթունք կու խմեմ յայն գինուն շիշայ <sup>1</sup> .  
Սարխոջ եմ յայն սիրուն , և է միաքս ի հօն՝ յուր ինք լինայ .  
Չունիմ շատոց կարիք , ով է չարկամ ու զիս որսայ :  
Ես եմ մէջ աշխարհիս զերդ զյիմար ի յանդիշայ <sup>2</sup> .  
Ոմանց թըւիմ խելքը , ոմանց խիստ խեւ ու անյիմայ .  
Ոմանք չար ին <sup>3</sup> հետ ինձ , կրճեն ատամն ի յիմ վերայ ,  
Ի ոմանց պատեհ թըւի զարիմս հեղուլ իր կամ լինայ <sup>4</sup> . . . .

<sup>1</sup> Այսանց բերանի՝ պյն շնորհաց գինուն ժշտն  
կը խմէ եղեք :  
<sup>2</sup> Էնդիւն . մոտմոռք :

<sup>3</sup> Են :  
<sup>4</sup> Հոս կը պակսի օրինակը , բայց մէկ երկու  
առուն բան միայն կը մնայ եղեք այս երկէն :

### ՆԱՒԱԲԵԿՈՒԹԻՒՆՆ ՊՈՐԻՍԹԵՆԻ

Լսած են ընթերցողք , կամ նաև 'ի  
բազմավիպիս մէջ կարդացած Մեղու-  
սա նաւուն խորտակման ցաւագին  
պատմութիւնը . ոհ , քանի քանիք այդ  
աղետալի դիպուածքն հանդիպին ա-  
ւելի աղետալի եղանակաւ , զոր ան-  
ձայն և անյիշատակագիր պատմու-  
թիւնը միայն՝ ամբաւ Ովկիանու զաշ-  
տին անձայն մէկ կողմը մենացեալ՝ իւր  
թերթիցը մէջ կ'արձանագրէ : Բայց թո-  
ղումք մեք զանոնք . աղետից համար  
շատ իսկ ծանօթներուն թիւր բաւա-  
կան են եթէն կարելու մեղ զմարդկային  
խեղճութիւնը և եթէ 'ի կարելցութիւն  
շարժելու երբեմն մեր հանգստեան  
և պարապորդ վայրկեաններուն մէջ  
կարդալով և մեր յիշատակութիւնը  
տանելով անոնց վրայ , որոնք պյն ա-  
ղետքէն շեն կրցած ճողովրել իրենք  
զիրենք : Թէ որ Մեղուռասայի նաւարեկ-  
ման և կամ Աղյանեդ նաւուն 'ի ծո-  
վու հրկիզութեան դէպքերը կէս դա-  
րու հնութեամբս մինչև հիմա արժանի

կ'ըլլան յիշատակի և գիթոյ և նկարչաց  
վրձնոյն , քանի ևս անոնք , որ գեռ հե-  
ռու չեն մեղմէ քան զյորս հինդ ամիս ,  
այս ձմեռուանս մէջ , և այն ծովուն , որ  
մեր զրակիցը կ'ըսուի , և որոց արդեօք  
քանիներուն սիրելիքն և կարևոր մեր-  
ձատորը յուր են և 'ի սուգ անմիշթար :  
Ասոնցմէ մէկն ալ էր Պորիարէն <sup>1</sup> շոգե-  
նաւը , որուն նաւարեկութեան լուրը  
կարդացուեցաւ շատ օրագրաց մէջ . բայց  
լինք նաև մանրամասն պատմուած ա-  
կանատես մէկէ մը , որ կը կոչուի Պր .  
Վէրէդ <sup>2</sup> , Ալճէրիի Օրան քաղքին զինուու-  
րական հիւանդանոցին զվասւոր վիրա-  
բութին օգնականը : Ծովէն ազատած  
բայց ոչ և 'ի սարսափելի յիշատակէն ,  
իր հրաշալի ազատման պատմութիւնը  
կը գրէ իր ծնողացը , ուստի քաղենք  
զառաջիկայս :

« Օրան , 1865 դեկտ . 26 .

իմ սիրելի և ազնիւ ծնողք ,  
« . . . Զգիտեմ ինչպէս ազատեցայ  
մահուլնէ , բնաւ ամենեին չգիտեմ .

<sup>1</sup> Գլ . Եօրյանեռ .

<sup>2</sup> Գլ . Վերետե .